



«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԻՃԱԿԻ,  
ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Ջ Ե Կ ՈՒ Յ Ց**

---

Գրիգոր Ավետիսյան

Գյումրի 2015

# Բովանդակություն

Ներածություն.....	3
2. Գյուղատնտեսության վիճակը Շիրակի մարզում 2015թ. ....	5
2.1 Բուսաբուծության վիճակը 2015թ.....	5
2.1 Անասնապահության վիճակը 2015թ. ....	9
2.3 Գյուղմթերք վերամշակողներ.....	11
3.Մարզի գյուղատնտեսական սպասումները 2016թ.ին .....	12
3.1 Բուսաբուծության սպասումները 2016-ին .....	12
3.2 Անասնապահության սպասումները 2016թ.-ին.....	15
4. Գյուղատնտեսության ոլորտում առկա խոչնդոտները .....	16
5.Հավելվածներ .....	17

## Ներածություն

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից՝ ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին:

Մարզկենտրոնն է Գյումրի քաղաքը, որը գտնվում է Երևանից 118 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1550մ է: Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ համարվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը:

ՀՀ Շիրակի մարզը, լինելով ծովի մակերևույթից մոտ 1500-2000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից մոտ 1500-1700մ, իսկ 55-ը՝ 2000մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը (Երևան-Գյումրի-Թբիլիսի, Թբիլիսի-Գյումրի-Կարս երկաթուղիները, Երևան-Գյումրի-Բավրա-Ախալքալաք և Գյումրի-Կարս ավտոխճուղիները): Աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից է նաև այն, որ Վրաստանի տարածքը՝ ՀՀ Շիրակի մարզին հարող պետական սահմանի ամբողջ երկայնքով հիմնականում հայաբնակ է: Շիրակի մարզի կենտրոնական և հարավային հատվածում տարածվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային շրջանում՝ Աշոցքի սարահարթը, միաժամանակ Շիրակի մարզում են տարածվում Փամբակի, Բազումի լեռնաշղթաների, Եղնախաղի, Զավախքի, Արագածի լեռնազանգվածների մի մասը:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 214546հա, որից վարելահողերը կազմում են 78700,8հա: Զրովի վարելահողերը կազմում են 20249,6հա: Շիրակի մարզը ունի 116 համայնք, բայց 119 գյուղական բնակավայր<sup>1</sup>: Մարզում մշակվող բույսերն են ցորենը, գարին, կարտոֆիլը, գազարը, սեղանի ձակնդեղը, կերային մշակաբույսերը (առվույտ ու կորնզան) և այլ բանջարաբուստանային մշակաբույսերը: Մարզի համար հստակ տարանջատում չենք կարող անել, թե գույղատնտեսական ճյուղերից ավելի շատ որ ուղղությամբ է

---

<sup>1</sup> Շիրակի մարզպետարան

մասնագիտացված, պարզապես կարող ենք նշել, որ բուսաբուծությամբ ավելի շատ են զբաղվում նախկին Ախուրյանի ու Արթիկի տարածաշրջանի գյուղերը, իսկ Աշոցքի, Ամասիայի ու Անիի տարածաշրջանի գյուղերը ավելի շատ մասնագիտացված են անասնապահության մեջ: Նշված տարածաշրջաններում հողերը ընդհանուր առմամբ չեն որոռոգվում ու արոտները շատ են դրա համար 70% և ավել բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Այդ գյուղերում ցանում են միայն ցորեն, գարի ու կերային մշակաբույսեր, այսինքն՝ մասնագիտացումը բուսաբուծության մեջ մինչև 30% է: Շիրակի մարզում ԽԵԱ ու ՄԵԱ<sup>2</sup> հարաբերակցությունը կազմում է 70/30:

Այգիների մասով մարզը աղքատ է, ինչը պայմանավորված է եղանակային պայմաններով, գյուղերում բերքատու ծառերը լինում են տնային տնտեսությունների տնամերձերում, յուրաքանչյուր տնամերջում մի քանի հատ: Ծառատեսակներն են՝ խնձոր, տանձ, սալոր, բալ և այլն:

Ջերմոցային տնտեսությունները սակավ են, կարելի է ասել նույնիսկ չկան: Ղա պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Մարզը աչքի է ընկնում Բասեն համայնքի ջերմոցներով, որոնք կառուցված են նորագույն տեխնոլոգիաներով (արևային էներգիա, ոռոգման ու պարարտացման նոր տեխնոլոգիաներ):

Ջեկույցը կազմվել է գյուղերում տվյալների հավաքագրման արդյունքում: Այցելություններ են կատարվել Շիրակի մարզի 11 համայնքներ<sup>3</sup>: Բացի նշված համայնքներից այցելություններ են կատարվել ևս 22 համայնք (Արևիկ, Ազատան, Առափի, Սառնաղբյուր, Երազգավորս, Արեգնադեմ, Բայանդուր, Բանդիվան, Մուսայեյան, Ջորակապ, Փանիկ, Գետափ, Փոքր Մանթաշ, Գուսանագյուղ, Ցողամարգ, Վարդաղբյուր, Բասեն, Ախուրիկ, Ախուրյան, Լուսակերտ, Նոր Կյանք, Կառնուտ, Մայիսյան, Այգաբաց, Ամասիա, Մեծ Մանթաշ, Արևշատ, Հացիկ, Մարմարաշեն, Վահրամաբերդ, Աշոցք, Պեմզաշեն, Ղարիբջանյան):<sup>4</sup>

<sup>2</sup> ԽԵԱ՝ խոշոր եղջերավոր անասուն, ՄԵԱ՝ մանր եղջերավոր անասուն

<sup>3</sup> ԿԲ կողմից իրականացված հարցումներ

<sup>4</sup> «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ հետզոտական խմբի հետ այցելություններ գյուղեր տեղեկատվության հավաքագրման նպատակով

## 2. Գյուղատնտեսության վիճակը Շիրակի մարզում 2015թ.

### 2.1 Բուսաբուծության վիճակը 2015թ.

2015 թ.-ը Շիրակի մարզի բուսաբուծության համար կարելի է ասել բարենպաստ է ստացվել: Գրեթե բոլոր մշակաբույսերի մասով բերքատվության աճ է գրանցվել: Այս տեղեկատվությունը ավելի պարզ ցույց տալու համար, ներկայացնենք յուրաքանչյուր մշակաբույսի ստացված բերքն ու դրա հիմնական պատճառները:

**Ցորեն:** Ցորենի ցանկատարածությունները զգալի փոփոխությունների չեն ենթարկվել: Կարելի է ասել անցած տարվա նույն քանակությունը պահպանվել է: Այս տարի ցորենի բերքատվությունը նախորդից բարձր է մոտ 20%-ով, քանի որ 2014-ին մարզի ցորենի բերքը կարկտահարվել է: Այս տարի բերքատվությունը բարձր է, սակայն այս տարվա ցորենի հատիկի որակը զիջում է նախորդ տարվա որակին: Պատճառը ցորենի հատիկի հասունացման շրջանում քամիների առկայությունն է: Ցորենի բերքատվության ավելացման պատճառներից է ՀՀ Կառավարության կողմից տրամադրվող սերմացուն: Ցորենի բերքատվությունը այս տարի միջինը կազմում է 20-30g/հա: Ցորենի միջինից բարձր բերք ստանում են Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում: Նշված գյուղերում ցորենը ոռոգում են ու մեծամասամբ ցանում են այն հողերում, որտեղ նախորդը կարտոֆիլ է եղել: Նշված հողերում բերքատվությունը հասնում է մինչև 70g/հա: Վերջին երկու տարիներին նկատվում է ցորենի գնի աճում: Այս տարի ցորենի 1կգ արժեքը կազմում է 100-120դրամ, որը նախորդի համեմատ 10-20 դրամով ցածր է:

**Գարի:** Այս տարի մարզում գարու ցանկատարածությունները զգալի փոփոխությունների չեն ենթարկվել: Կարելի է ասել անցած տարվա նույն քանակությունը պահպանվել է: Այս տարի գարու բերքատվությունը նախորդից բարձր է մոտ 20%-ով, քանի որ 2014-ին մարզի ցորենի բերքը կարկտահարվել է: Գարու բերքատվությունը կազմում է 20-25g/հա: Այս տարի գարու գինը նույնպես ցածր է՝ 90-110դրամ 1կգ համար: Այս գինը անցած տարվա համեմատ նվազել է 10-30 դրամով: Գարի մարզում բոլոր գյուղերում էլ ցանում են: Լեռնային գյուղերում այն համարվում է լավ անասնակեր ԽԵԱ ու խոզերի համար:

**Կարտոֆիլ:** Հիմնականում ցանում են Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում մասնավորապես՝ Ազատան, Արևիկ, Հացիկ, Կառնուտ, Մայիսյան, Ղարիբջանյան գյուղերում և Արթիկի տարածաշրջանի Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ և Արևշատ գյուղերում: Հյուսիսային գյուղերում տնային տնտեսությունները ցանում են

հիմնականում սեփական սպառման նպատակով: Կարտոֆիլի բերքատվությունը այս տարի նախորդի համեմատ աճել է 5-10%-ով, այն կազմում է 250-300g/հա: Այս տարվա եղանակային պայմանները ավելի նպաստավոր էին: Կարտոֆիլի ցանքերը անցած տարվա համեմատ գրեթե նույն են: Կարտոֆիլի ներկայիս գները անցած տարվա համեմատ նվազել են 50դրամով, այժմ այն կազմում է 120-150 դրամ մեծածախ գինն է սա:

**Գազար:** Շատ են ցանում Արթիկի տարածաշրջանի Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ Արևշատ գյուղերում: Մյուս գյուղերում ցանում են տնամերձերում բաժանարար թմբիկների վրա, որը քանակ չի կազմում ու սեփական սպառման համար է: Այս տարի բերքը նախորդի համեմատ 10% ավել է, սակայն միջինից ցածր, քանի որ անցած տարի կարկուտը վնասել է: Ղա ազդել է բերքատվության մակարդակի վրա: Իսկ այս տարի նկատվում է գազարի մասսայական նեխում հողում: Չնայած դրան այս տարի բերքատվությունը նախորդից շատ է ստացվել: Մարզում ամեն տարի գրեթե նույն քանակությամբ գազար է ցանվում:

**Բազուկ:** Մարզում բազուկ ցանում են հիմնականում Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում, բայց ամենաշատը ցանում են Կառնուտ համայնքում, որի արտադրանքը նույնիսկ կարող է ՀՀ-ում տվյալ գյուղնթերքի պահանջարկը բավարարել ու նույնիսկ ավելցուկ տալ: Սովորաբար այդ մշակաբույսը մյուս գյուղերում ցանում են տնամերձերում շատ քիչ քանակությամբ և այն օգտագործվում է սեփական սպառման նպատակով: Բերքատվությունը անցած տարվա համեմատ ավելացել է 5-10%-ով. 2014-ին կարկտհարվել է, այս տարի եղանակը բարենպաստ է, բերքատվությունը 300-350g/հա է:

**Կաղամբ ու Ծաղկակաղամբ:** Այս մշակաբույսերը ցանում են հիմնականում Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում, մասնավորապես Ղարիբջանյանում ու Կառնուտում: Մյուս գյուղերում այն մշակում են տնամերձերում սեփական սպառման նպատակով: Այս մշակաբույսերը խոնավասեր են ու պահանջում են անընդհատ ոռոգում, իսկ դա նշանակում է, որ այն գյուղերը որտեղ ոռոգում չկա չեն մշակում, իսկ այդպիսի գյուղեր մարզում շատ կան: Այս տարի Ծաղկակաղամբի և կաղամբի ցանքատարածությունները մարզում 2014-ի համեմատ գրեթե չեն փոխվել: Երկուսի դեպքում էլ բերքատվությունը ավել է մոտ 50%-ով (20տոննայի փոխարեն 30տոննա՝ ծաղկակաղամբի պարագայում, 35 տոննայի փոխարեն 50-55 տոննա՝ կաղամբի պարագայում): Ներկայումս ծաղկակաղամբը գյուղում վաճառվում է 50-60դրամով, կաղամբը՝ 40-50դրամով:

**Կերային Մշակաբույսեր(առվույտ ու կորնզան):** Խոտի ծավալը այս տարի աննախադեպ էր: Անցած տարվա համեմատ այն 20-30%-ով ավել էր: Պատճառը զարնանային անձրևների ժամանակին տեղումներն էին: Ընդհանուր առմամբ տարին խոտի համար բարենպաստ էր: Առվույտի ու կորնզանի ցանքատարածությունները մարզում ավելացել է: Այս տարի ինչպես կանխատեսվում էր խոտի առատ բերք ստացվեց: Ստացվածը գերազանցեց կանխատեսումները :<sup>5</sup> Առատ բերքը պայմանավորված էր եղանակային բարենպաստ պայմաններով, հորդառատ անձրևներով ու կարկտահարության բացակայությամբ: Այս տարի մարզում կարկտահարվեց միայն Կառնուտ և Ջրառատ համայնքները: Առաձնացնենք խոտի երեք տեսակներ՝ կորնզան, առվույտ ու չմշակված տարածքներում (սրանք Ախուրյանի տարածաշրջանում այն տարածքներն են, որոնցում հողը չեն ցանում այլ թողնում են հանգստանալու) աճող ցելի կոչվող խոտը: Կորնզանի բերքը 1հա հաշվով միջինը գերազանցում է 50g-ի սահմանը, այսինքն՝ 1հա-ից ստացվել է 250 տուկ և ավելի: Վարդաքար գյուղում նույնիսկ 1հա-ից ստացել է 550 հատ տուկ: Սա ռեկորդային ցուցանիշ է: Առվույտի դեպքում 1հա-ից ստացվել է 150-200 հատ տուկ, այսինքն՝ 10հա-ից՝ 30-40g: Պայմանական չմշակված տարածքներց ստացվել է 1հա-ից 100-150 հատ տուկ, այսինքն՝ 20-30g: Ամասիայի ու Աշոցքի տարածաշրջաններում սարի խոտ են հնձում ու այնտեղ բերքը նույնպես առատ է անցած տարվա համեմատ: Այն հասնում է 10հա-ի հաշվով 20-30g-ի: Առատ բերքով պայմանավորված, բնականաբար տեղի ունեցավ գների նվազում. անցած տարվա համեմատ գրեթե 30%: Կորնզանի մի տուկը վաճառվում է 800 դրամով, իսկ առվույտը՝ 1000դրամով ,մյուս տեսակը ավելի էժան `700դրամով: Կարելի է ասել,որ գյուղացիների մեծ մասը իրենց անասունների համար արդեն ապահովել են ձմռան խոտի պաշարը, իսկ այն մասը ովքեր դեռ ուեն խոտի պաշար ամբարելու կարիք սպասում են գների նվազմանը: Այս գնանկումը իր ազդեցությունը կունենա անասնազվխաքանակի ու տավարի մսի գնի վրա:

**Այգիներ:**Մարզում այգեգործությունը զարգացած չէ, որը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Արդեն նշվել են հիմնական ծառատեսակները, որոնք հարմարվում են մարզի կլիմայական պայմաններին:Մարզում համեմատաբար շատ մրգատու ծառեր կան Արթիկի տարածաշրջանի Գետափ, Փանիկ և հարևան գյուղերում: Անցած տարվա համեմատ խնձորի ու տանձի բերքը շատ է, քանի որ անցած տարվա կարկտահարությունների դեպքերի պարագայում, այս տարի եղանակը բարենպաստ էր: Այս համայնքներում տնային տնտեսությունները ունեցան

<sup>5</sup> Հարցումների ընթացքում տնային տնտեսությունների արձագանք

Աշված մրգերից վաճառքի պաշարներ: Մարզի մյուս համայնքներում ստացված մրգերը օգտագործվում է սեփական սպառման համար:



## 2.1 Անասնապահության վիճակը 2015թ.

**Խոշոր եղջերավոր անասուններ(ԽԵԱ):**Շիրակի մարզում գլխաքանակը կարելի է ասել մնացել է նույնը: Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում գլխաքանակը նվազել է, իսկ Արթիկի տարածաշրջանի գյուղերում ավելացել է 2-3%-ով: Գյուղացիների հետ զրույցում պարզ է դառնում, որ եթե խոտի բերքը առատ չլիներ, ապա (օրինակ առվույտի մեկ տուկը արժե 800-1000 դրամ, նախորդ տարվա համեմատ նվազել է կրկնակի) հոտի գլխաքանակը կպակասեր: Սա պայմանավորված է կաթի գնի էժանացմամբ: Կաթը այժմ մթերվում է 120-130դրամով՝ նախկին 170-180դրամի փոխարեն: Ստացվում է, որ կով պահելը շահութաբեր չէ: Իսկ ինչ վերաբերվում է մորթին՝ այն նոր է սկսվելու: Մորթը հնարավոր է շատ լինի՝ կապված կաթի էժանացման ու գյուղատնտեսական վարկերի վճարելու հետ: Այժմ տավարի մսի շուկայական գինը կազմում է 1800-2200 դրամ<sup>6</sup>, իսկ գյուղից վերավաճառողները գյուղից տանում են 1500-1900 դրամով: Աշոցքի ու Ամսիայի տարածաշրջաններում մսի գինը ավելի էժան է՝ կապված հեռավորության հետ:

**ՄԵԱ:**Շիրակի մարզում ոչխարաբուծությունը հիմնականում զարգացած է լեռնային շրջաններում: Գյուղերում ոչ բոլոր տնային տնտեսություններն են ոչխար պահում: Հարցումների արդյունքում պարզվեց, որ տարեկան 2 ծին ստանալու հավանականությունը կազմում է մոտ 20%:

Ոչխարից ստացվող հիմնական եկամուտը ապահովում են գառները, դրանք ծնվելով զարնանը, առանձնապես ծախս չեն պահանջում: Անցած տարվա համեմատ գլխաքանակը մնացել է նույնը: Ոչխարի միսը էժան է, իսկ պահանջարկն՝ ցածր: Այդ իսկ պատճառով ոչխար մարզի գյուղերում վաճառում են առաջին իսկ հնարավորության դեպքում: Գնորդները հիմնականում եզդիներն են, ովքեր մեկ ոչխարի դիմաց առաջարկում են 20-25հազ դրամ և եթե 30հազ-ի առաջարկ լինի գյուղի ոչխար պահողները իրենց ունեցած գլխաքանակի զգալի մասը կվաճառեն: Ոչխարի բուրդը թափում են, գնորդներ չկան: Իսկ գառի միջին գինը այս տարի կազմում է 20 հազ դրամ:

**Խոզի** գլխաքանակը այս տարի մի փոքր ավելացել է: Խոզերի շրջանում կա հիվանդություն: Խոզի գոջիները 15-50 օրականում հիվանդանում են լուծով, ինչը նշանակում է, որ խոզաբուծությունը բավականին լուրջ և ուշադրություն պահանջող գծերնթաց է<sup>7</sup>: Խոզի մսի արժեքը գյուղում 2400-2500 դրամ է, իսկ շուկայում այն վաճառվում է 2800-3000 դրամով: Խոզաբուծությունը տարածված չէ: Ավելի շատ

<sup>6</sup> Շուկայում մոնիթորինգի արդյունք

<sup>7</sup> Գյուղացիների հետ զրույցում

Կենտրոնացվածություն կա: Գյուղեր կան, որոնցում ամբողջ գյուղի գլխաքանակի 40%-ը պատկանում է մի հոգու:

**Մեղու:** Մեղվաբուծությունը Շիրակի մարզում ունի զարգացման պոտենցիալ, քանի որ նախալեռնային և լեռնային բուսականությունը բավականին նպաստավոր է մեղվաբուծության համար: Այս տարի ավելացել է 5% մեղվանտանիքների քանակը: Այս տարի մեղվատվության աճ է գրանցվել միջինը 7%-ով, քանի որ այս տարի եղանակային պայմանները բարենպաստ էին ու խոնավ: Եղանակը ապահովեց ծաղիկների շուտ չչորանալուն:

**Հավ:** Այս տարի հավերի թիվը 3%-ով ավելացել է: Մարզի գյուղերում գրեթե բոլոր տնային տնտեսությունները հավեր պահում են: Սովորաբար տնային տնտեսությունները ճուտ են գնում ամեն տարի ու հավերի համար սերնդափոխություն անում, իսկ մորթած հավերը օգտագործվում է սեփական սպառման համար:

## 2.3 Գյուղերը վերամշակողներ

Մարզում կան 8-ից ավելի պանրագործությամբ զբաղվող ընկերություններ, որոնցից Իգիթ ՍՊԸ-ն զբաղվում է նաև կաթնամթերքի արտադրությամբ՝ թթվասեր, կաթնաշոռ, կաթ, պաղպաղակ և այլն: 2013թ-ից Ալեքսյոլ ՍՊԸ-ն մտավ այս ոլորտ և սկսեց արտադրել պանիր, մածուց և այլն:

Ոլորտի զարգացումը մեծ կախվածություն ունի վարկային ռեսուրսներից, քանի որ կաթի հիմնական մթերումը կատարվում է ամռան ամիսներին և այդ ժամանակահատվածում ընկերությունները ունենում են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների կարիք, իսկ դրանց բացակայության դեպքում ունենում են լուրջ խնդիրներ: Դրա պատճառով ստացվում է, որ մթերողները ուշացնում են գյուղացիներից գնված կաթի դիմաց վճարումները:

Ոլորտի զարգացմանը խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ գյուղացիներից գնված կաթի ԱԱՀ-ի վճարման բեռը ընկնում է տնտեսվարողների վրա (գյուղատնտեսական արտադրանքը ազատված է ԱԱՀ-ից) և արդյունքում ստացվում է արտադրանքի համար վաճառքի բարձր գին, ինչը խոչընդոտ է ներկայիս ցածր գնողունակության պայմաններում:

Շուկան սահմանափակ է, պանրագործները՝ բազմաթիվ, իսկ զարգացման համար անհրաժեշտ է արտահանման կազմակերպում:

Մարզում կան գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ: Դրանք են Ագրոսերվիս Վ և Մ, Հացիկի սերմնաբույծ, Արգրոլույս, Ագրոսերվիս, Ա/Չ Կամո Ջակարյան և այլ կազմակերպություններ: Նշված կազմակերպությունները զբաղվում են հիմնականում կարտոֆիլի ու ցորենի մշակմամբ և սերմերի ստացմամբ: Մարզում կան գյուղեր, որտեղ անհատ գյուղատնտեսները ունեն 15-30հա: Այդպիսի գյուղեր են հանդիսանում Ազատան, Արևիկ, Ախուրյան, Կառնուտ, Բենյամին և այլն: Այդպիսի ծավալեր հիմնականում լինում են Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում: Հիմնական մշակում են ցորեն, կարտոֆիլ և սեղանի ճակնդեղ: Ամասիայի ու Աշոցքի տարածաշրջանի գյուղերում կան ԽԵԱ ու ՄԵԱ մեծ բուծողներ 40 գլուխ և ավել:

### 3.Մարզի գյուղատնտեսական սպասումները 2016թ.ին

#### 3.1 Բուսաբուծության սպասումները 2016-ին

Այս մասում ներկայացվում է, թե գյուղացիները ինչ սպասումներ ունեն 2016թ. գյուղատնտեսական տարվա համար: Կրկին յուրաքանչյուր մշակաբույսի համար ներկայացնենք առանձին-առանձին:

**Ցորեն:** Ցորենը ցանում են աշնանը ու կարող ենք ասել, որ 2015 թ-ի աշունը բարենպաստ է, քանի որ աշնանը ցանելու ընթացքում ու ցանելուց հետո առատ տեղումներ եղան: Նույնիսկ հոկտեմբեր ամսին արձանագրվեց նորմայից 3 անգամ ավել տեղումներ<sup>8</sup>: Ստացվում է, որ ցորենի արմատակալումը լավ է տեղի ունեցել ու այն կարող ենք ասել, որ պատրաստ է ձմեռացման, այսինքն՝ ցրտահարվելու հավանականությունը քչանում է: Օրինակի համար կարող ենք 2014թ.ի աշունը մատնանշել, որ այս տարի լավ բերք ստացվեց: Լրացուցիչ նշենք, որ ցորենի բերքատվությունը մեծամասամբ պայմանավորված է եղանակային պայմաններից: Ինչպես բազմիցս նշվեց մարզի հողերի մեծ մասը չի ոռոգվում, հետևաբար կախված է մնում եղանակից: Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում սպասվում է առատ բերք, քանի որ այդ ցորենի տեղերը հիմնականում նախորդը կարտոֆիլ է, ու արդեն նշվեց առավելությունը: Ցանկատարածությունները ավելացել են, դա պայմանավորված է Կառավարության կողմից տրամադրվող սերմով, որի համար գյուղացին վճարում է 2016թ.ի բերքահավաքից հետո: Բերքատվության վրա իր ազդեցությունն ունի նաև սերմի որակը: Այս տարի Կառավարության կողմից տրամադրվող սերմը համեմատաբար ավելի որակով է:

**Գարի:** 2016թ. համար ցանքատարածությունների չափի փոփոխություն չի կանխատեսվում, իսկ բերքատվությունը խիստ կապված է եղանակային պայմաններից: Այս պահին ցանքատարածությունները վարել են, այսինքն՝ նախապատրաստել են գարնան համար: Նախապատրաստած հողերից չենք կարող ենթադրել 2016-ի գարու ցանկատարածությունը, քանի որ աշնանը հողը վարելով նախապատրաստում են նաև կարտոֆիլի, ու այլ բանջարաբոստանային կուլտուրաների համար:

**Կարտոֆիլ:** Ինչպես նշվեց կարտոֆիլ հիմնականում ցանում են Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում մասնավորապես՝ Ազատան, Ախուրյան, Արևիկ, Հացիկ, Կառնուտ, Մայիսյան, Ղարիբջանյան գյուղերում և Արթիկի տարածաշրջանի Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ և Արևշատ գյուղերում: Հյուսիսային գյուղերում տնային

<sup>8</sup> Հայպետհիդրոմեդ ծառայություն

տնտեսությունները ցանում են հիմնականում սեփական սպառման նպատակով, այսինքն՝ իրենք ամեն տարի նույն քանակությամբ են ցանում, 2016թ.-ին էլ նույն քանակությամբ կցանեն: Կարտոֆիլի բերքատվությունը կախված է հիմնականում սերմացուի որակից, որպես կանոն եվրոպայից ներկրած առաջին վերարտադրության սերմը միշտ բերք տալիս է: Իսկ մյուս տարվա ներկրվող սերմի քանակը կապված է այս տարվա կարտոֆիլի բերքի սպառման հետ, որը խնդիր է ու այժմ չի արտահանվում:

**Գազար:** Արդեն նշվեց, որ գազար շատ են ցանում Արթիկի տարածաշրջանի Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ Արևշատ գյուղերում, մյուս գյուղերում ցանում են տնամերձերում բաժանարար թմբիկների վրա, որը քանակ չի կազմում ու սեփական սպառման համար է նախատեսվում: Այս գյուղերում ամեն տարի գրեթե նույն չափ են ցանում: Բերքատվությունը կախված է եղանակից:

**Բազուկ:** Մարզում բազուկ ցանում են հիմնականում Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում, բայց ամենաշատը ցանում են Կառնուտ համայնքում, որի արտադրանքը նույնիսկ կարող է ՀՀ-ում տվյալ գյուղնթերքի պահանջարկը բավարարել ու նույնիսկ ավել: Այս գյուղերում միշտ ցանում են անկախ գնից՝ հույս ունենալով, որ գների մակարդակը բավարար կլինի, ցանքերի չափը կպահպանվի:

**Կաղամբ ու Ծաղկակաղամբ:** Այս մշակաբույսերը ցանում են հիմնականում Ախուրյանի տարածաշրջանի գյուղերում, մասնավորապես՝ Ղարիբջանյանում ու Կառնուտում: Մյուս գյուղերում այն մշակում են տնամերձերում սեփական սպառման նպատակով: Ղարիբջանյանում հարցումների ընթացքում պարզ դարձավ, որ գյուղացիները այս երկու մշակաբույսերը հնարավոր է մյուս տարի քիչ ցանեն. պատճառը իրացումն է: Իսկ բերքատվությունը կախված է եղանակից: Եթե կարկուտ չլինի իրենք միշտ լավ բերք են ստանում, քանի որ իրենց հողերը բերքատու են ու ջուրն էլ խնդիր չէ:

**Կերային մշակաբույսեր (առվույտ ու կորնզան):** Խոտը այս տարի աննախադեպ էր ու միջինից կարելի է ասել 10-15% ավել է: Գյուղացիների հետ զրույցում պարզ դարձավ, որ մյուս տարի այսպիսի բերք չեն ակնկալում: Առվույտի ու կորնզանի ցանքատարածությունները մի փոքր ավելացել են<sup>9</sup>:

**Այգիներ:** Քանի որ մարզում այգեգործությունը զարգացած չէ ու գյուղացիները մասնագիտացած չեն դրա մեջ, չկարողացան մեկնաբանել մյուս տարվա բերքի

---

<sup>9</sup> Գյուղապետարնների կողմից տրված տեղեկատվություն

ակնկալիքները: Միայն նշվեց, որ եթե կարկուտ չլինի արդյունքներ սպասվում են:  
բացի դրանից նշվեց, որ խնձորը ունի սեզոնայնություն: Այս տարի բերքը լավ է  
ստացվել ուրեմն խնձորի մյուս տարվա բերքը քիչ կլինի:

### 3.2 Անասնապահության սպասումները 2016թ.-ին

**Խոշոր եղջերավոր անասուններ(ԽԵԱ):** Անասնազլխաքանակի անկում կլինի, քանի որ կաթի գնանկման պատճառով նվազել է կովի շահութաբերությունը: Անասնազլխաքանակի նվազման մեկ այլ պատճառ է նաև մարդկանց ընդհանուր եկամուտների նվազումը, որի արդյունքում ընտանիքի ծախսերը հոգալու համար գյուղացին վաճառում է ԽԵԱ: Բացի դրանից նոյեմբերի վերջ-դեկտեմբերին գյուղատնտեսական վարկերի վճարման ժամանակն է: Նույնիսկ խոտի էժան գինը չի կանխի գլխաքանակի պակասեցումը<sup>10</sup>:

**ՄԵԱ:** Շիրակի մարզում ոչխարի գլխաքանակի էական փոփոխություն չի կանխատեսվում, որովհետև ոչխար պահելը համեմատաբար ավելի էժան է ու հեշտ, քան ԽԵԱ: Բացի դրանից ոչխարի գոմաղբը օգտագործվում է ոպես որակյալ վառելանյութ, մասնավորապես Աշոցքի ու Ամսիայի տարածաշրջաններում: Մի գիլ մակնիշի բեռնատարը ոչխարի գոմաղբով բեռնված արժե 40-50 հազար ՀՀ դրամ:

**Խոզի:** Խոզի գլխաքանակի փոփոխություն դժվար է կանխատեսել, քանի որ խոզը նուրբ կենդանի է ու զարգացումը 50/50հարաբերակցությամբ է:

**Մեղու:** Ինչպես նշվեց մեղվաբուծությունը Շիրակի մարզում ունի զարգացման պոտենցիալ, քանի որ նախալեռնային և լեռնային բուսականությունը բավականին նպաստավոր է մեղվաբուծության համար: Այս տարի մեղվտվության աճ է գրանցվել ու իրացման խնդիր չի առաջացել: Հնարավոր է դրանից հետևություն անել, որ մյուս տարի ծավալների աճ կլինի:

**Հավ:** Ամեն տարի նկատվում է հավերի թվաքանակի աճ: Մյուս տարի ևս կլինի աճ: Գյուղացիները նշում են, որ ամեն տարի ճուտ են գնում կամ իրենց հավերից են թուխս լինում ու այդպես շատանում են հավերը: Չվատվությունը նույնն է, որովհետև ասում են, որ հավը տարվա օրերի կեսի չափ է աճում<sup>11</sup>:

<sup>10</sup> Նշում են գյուղացիները

<sup>11</sup> Գյուղացիները չեն հաշվում հավկիթները

#### **4. Գյուղատնտեսության ոլորտում առկա խոչնդոտները**

Այս մասում ներկայացված է Շիրակի մարզի գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրները ըստ առանձին մշակաբույսերի ու ոլորտների:

**Հացահատիկային մշակաբույսեր:** Այս ոլորտում կարևոր խնդիր է օգտագործվող հացահատիկահավաք կամ կերահավաք կոմբայնքների մաշվածությունը, որի արդյունքում բերք արդյունավետորեն չի հավաքվում դաշտից՝ ունենալով կորուստ մինչև 30%: Հակակարկտային կայանների սակավությունը: Խնդիր է իրացման ցածր գինը:

**Կարտոֆիլ:** Կրկին իրացման խնդիրն է: այս տարի վրացիներ չեկան ու դա բացասական հետևանքներ ունեցավ, բացի այն որ գինը էժան է 7 գնորդ էլ չկա:

**Գազար/բազուկ:** Այս մշակաբույսեր մշակողները նույնպես հույսները արտահանման վրա են դրել, սակայն ասում են վրացիներ չեկան ու բազուկը շատ էժան է վաճառում:

**Կաղամբ ու Ծաղկակաղամբ:** Այս երկուսի դեպքում էլ մեծ խնդիր է առաջացել՝ մասնավորապես ծաղկակաղամբի: Խնդիրը կրկին կապված է իրացման հետ: Ասում են վրացիները չեկան ու դա կապում են մեր պետության վարած քաղաքականության հետ:

**Խեմ, Մեմ:** Այս ոլորտում կարևոր խնդիր էր արոտներում անասունների ջրման համար խնոցների բացակայությունը, սակայն մարզում ակտիվ կեպով ստեղծվում են կոռպերատիվներ ու շատ գյուղերում մուծվել է այդ հարցը (Բասեն, Այգաբաց, Զրառատ և այլն): Մյուս կարևոր խնդիրը կաթի իրացման ցածր գինն է, որը պայմանավորված տեղի կաթ վերամշակող կազմակերպությունների արտահանման ծավալների կրճատման հետ :

**Խոզ:** Մարզում ամենամեծ խնդիրը խոզի լուծի տարածումն է, որից մեծ զվխաքանակ է վնասվում կամ ոչնչանում :

**Մեղու:** Այս ոլորտում առկա խնդիր է մեղրի որակը ստուգող հատուկ լաբորատորիաների բացակայությունը, որի արկայության դեպքում, արդար մեղվապահները կկարողանային ստուգելով և հավաստագրեր ստանալով ավելացնել իրենց արտադրանքի հանդեպ վստահությունը՝ արդյունքում ավելի բարձր գնով իրացնելով իրենց արտադրանքը:



## 5. Հավելվածներ

### Աղյուսակ 1՝ Բուսաբուծության զարգացումները 2015թ. և սպասումները 2016թ. համար

Մշակաբույսի տեսակ	2015թ. աճը 2014թ. նկատմամբ	2016թ. սպասումը 2015թ. նկատմամբ	
		Գնահատական	Մեկնաբանություններ
Ցորեն	20%	0%	Այս տարի բերքը առատ էր: Անցած տարվա համեմատ աճել է: Պատճառը անցած տարվա կարկտահարություններն են: Այս տարի աշունը բարենպաստ է աշնանացանի համար
Գարի	15-20%	0	Տարին բարենպաստ էր: Անցած տարվա համեմատ բերքը աճել է: պատճառը 2014-ի կակտահարությունն է:
Կարտոֆիլ	15%	0	Բերքատվությունը այս տարի նախորդի համեմատ աճել է 5-10%-ով:
զազար	10%	0	Այս տարի բերքը նախորդի համեմատ ավելացել է, սակայն միջինից ցածր, քանի որ անցած տարի կարկուտը վնասվել է:
Սեղանի ճակնդեղ	5-10%		Բերքատվությունը անցած տարվա համեմատ ավելացել է: 2014թ.ին բերքը կարկտահարվել է: Այս տարի եղանակը բարենպաստ է:
Կաղամբ Ծաղկակաղամբ	50%	0	Երկուսի դեպքում էլ բերքատվությունը 2015թ-ին ավելացել է: Անցած տարի բերքը կարկտահարվել է: Մյուս տարի ցանքսերը

			կկրճատվեն:
Առվույտ ու կորնգան	20-30%	10%	Բերքի ծավալները այս տարի աննախադեպ էին: Եղանակային պայմանները լավն էին: Մյուս տարի այս տարվա համեմատ բերքը կնվազի:

**Աղյուսակ 2: Անասնապահության զարգացումները 2015թ. և սպասումները 2016թ. համար**

Անասունի տեսակ	2015թ. աճը 2014թ. նկատմամբ		2016թ. սպասումը 2015թ. նկատմամբ		
	Գլխաքանակ	Գյուղ արտադրանք	Գլխաքանակ	Գյուղ արտադրանք	Մեկնաբանություններ
Խեւ	0	-2%	-2-3%	-2-3%	Հիմնական պատճառը կաթի ու մսի գնի նվազումն է:
Ոչխար	0%	0%	0%	0%	Մարզում ոչխարի գլխաքանակի էական փոփոխություն չի կանխատեսվում, որովհետև ոչխարի պահելը համեմատաբար ավելի էժան է ու հեշտ:
Խոզ	2%	1%	0%	0%	Խոզի գլխաքանակի փոփոխություն դժվար է կանխատեսել:
Հավ	3	3	2	2	Ամեն տարի նկատվում է հավերի թվաքանակի աճ: Մյուս տարի ևս կլինի աճ:
Մեղու	5%	7%	5%	5%	Եղանակային պայմանները բարենպաստ էին ու մեղրի իրացման խնդիր չկար: Դրա համար մյուս տարի կրկին աճ կլինի: